ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հոկտեմբերի 2023 թվականի N 1697-Ա

ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. 2022 թվականի արտադրության 21 239 203 դրամ ընդհանուր արժեքով «Mercedes-Benz» մակնիշի, V250 մոդելի, W1V44781314160220 նույնացման համարով և 2022 թվականի արտադրության 37 836 685 դրամ ընդհանուր արժեքով «Mercedes-Benz» մակնիշի, Sprinter մոդելի, W1V9076551P09937 նույնացման համարով տրանսպորտային միջոցները (այսուհետ՝ գույք) ամրացնել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի պետական գրանցումը (հաշվառումը):

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի գրանցման (հաշվառման) հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

05.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ